

Հավելված N 1  
ՀՀ վարչապետի 2018 թ.  
հուլիսի 20 -ի N 986 -Ա  
դրոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇԵՐԻՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱ-  
ՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆՆ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՂ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

- Ա. Գրիգորյան - ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար (աշխատանքային խմբի ղեկավար)
- Տ. Հակոբյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի փորձագետ
- Տ. Գալստյան - ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ
- Մ. Նահապետյան - ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի օգնական
- Ի. Աբաջյան - ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչության պետ
- Ա. Ավագյան - ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչության ընդերքի պահպանության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ
- Ա. Ղարաբեկյան - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի խորհրդական
- Հ. Սարոյան - ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության մթնոլորտ արտանետումների և օզոնային շերտը քայքայող նյութերի առաքման թույլտվությունների բաժնի պետ

Ա. Այվազյան	- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի գործակալության պետի պաշտոնակատար
Իս. Բարայան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ
Ռ. Գրիգորյան	- ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի շրջակա միջավայրի հիգիենայի բաժնի պետ
Ռ. Աբովյան	- ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ
Ն. Բակունց	- ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ
Ն. Վարդանյան	- ՀՀ փաստաբանական պալատի անդամ (համաձայնությամբ)
Մ. Վիլլիանս	- Թթվային դրենաժի (այդ թվում՝ պոչամբարների շահագործման) հետևանքների կանխատեսման և կառավարման, ազդեցության ավստորոշման, հանքի փակման, մակերևութային/ ընդերքային հիդրոքիմիայի, երկրաբանատեխնիկական և հիդրոերկրաբանական հարցերով փորձագետ, գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)
Ք. Անդերսոն	- Ազդակիր համայնքի ներկայացուցիչների գույքագրման, կանխատեսվող խնդիրների վերհանման, տեղաբնակների պատշաճ ներգրավվածության ապահովման, համայնքի ներկայացուցիչների կողմից բարձրացված խնդիրների («ողջամիտ ջանասիրության» սկզբունքով) ազդեցության գնահատման, հանքարդյունաբերության բնագավառում հանրային պատասխանատվության, սոցիալ մարդաբանության և մարդու իրավունքների հարցերով փորձագետ, գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)

- Ս. Թևանյան - Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)
- Ա. Հովհաննիսյան - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Ընդերքաբանություն և շրջակա միջավայրի պահպանություն» ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)
- Ս. Մկրտչյան - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Լեռնամետալուրգիական արդյունաբերության և բնօգտագործման տնտեսագիտություն և կառավարում» ֆակուլտետի բնօգտագործման և տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ (համաձայնությամբ)
- Լ. Սահակյան - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանության ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն (համաձայնությամբ)
- Գ. Տեփանոսյան - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի՝ շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժնի վարիչ (համաձայնությամբ)
- Իս. Սապոնջյան - Հայաստանի հանքարդյունաբերողների և մետալուրգների միության փոխնախագահ (համաձայնությամբ)
- Շ. Խաչատրյան - Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի՝ ռեզիդուս երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների դոցենտ (համաձայնությամբ)
- Կ. Մանվելյան - Վայրի բնության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի ղեկավար (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇԵՐԻՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱ-  
ՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆՆ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՂ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Սույն կարգով սահմանվում են աշխատանքային խմբի աշխատանքների կազմա-  
կերպման հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաս-  
տանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով:

3. Աշխատանքային խմբի նպատակն է փաստահավաք գործունեության միջոցով,  
ընդերքօգտագործման ոլորտում աշխատող ընկերությունների գործունեության, նախագծային  
և այլ փաստաթղթերի դիտագնության հիման վրա գնահատել այդ գործունեության սոցիալ-  
տնտեսական և բնապահպանական ազդեցությունները, վերհանել հանքարդյունաբերության  
ոլորտում առկա բնապահպանական, առողջապահական ռիսկերը և խնդիրները, առաջարկել  
վերջիններիս լուծման հնարավոր տարրերակներ՝ աջակցելու Հայաստանի Հանրապետության  
կառավարության կողմից հանքարդյունաբերության ոլորտում միջազգային չափանիշերին  
համապատասխանող քաղաքականության ներդրմանն ու իրագործմանը: Աշխատանքային  
խումբն իրականացնում է նաև հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող Հայաստանի  
Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի՝ Հայաստանի Հանրապետության միջազ-  
գային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին համապատասխանության հա-

մենատական իրավավերլուծություն և համապատասխան առաջարկություններ ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

## II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Աշխատանքային խումբն իր գործունեությունն իրականացնում է աշխատանքային հանդիպումների միջոցով:

5. Աշխատանքային խումբը ղեկավարում և հանդիպումները հրավիրում և վարում է աշխատանքային խմբի ղեկավարը:

6. Անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի ղեկավարը կարող է աշխատանքային խմբի այլ անդամի հանձնարարել վարելու աշխատանքային հանդիպումները:

Աշխատանքային խմբի անդամները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու են ստանալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, ընդերքօգտագործող ընկերությունից (համաձայնությամբ) տվյալ հանքավայրին կամ ընդերքօգտագործման ծրագրին առնչվող փաստաթղթեր և այլ տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են աշխատանքային խմբի առջև դրված խնդիրները լուծելու համար: Ընդերքօգտագործող ընկերության համաձայնությամբ՝ աշխատանքային խմբի անդամները կարող են մուտք գործել հանքավայրի տարածք՝ դիտագնություն իրականացնելու համար:

7. Պահպանելով շահագրգիռ կողմերի ներկայացվածության հավասարակշռությունը՝ աշխատանքային խմբի ղեկավարի համաձայնությամբ աշխատանքային խմբի աշխատանքներին կարող են ներգրավվել և իրականացվող աշխատանքներին օժանդակել քաղաքացիական հասարակության, ազդակիր համայնքի և դիտագնության օբյեկտ հանդիսացող ընկերության ներկայացուցիչներ:

8. Աշխատանքային խմբի գործունեությունը բաց է զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանման համար:

9. Աշխատանքային խմբի հանդիպումներն արձանագրվում են: Արձանագրությունը ներառում է հանդիպման ընթացքում բարձրացված հարցերը, դրանց լուծման վերաբերյալ առաջարկները, յուրաքանչյուր հարցի կապակցությամբ շահագրգիռ կողմերի և աշխատանքային խմբի անդամների դիրքորոշումները:

10. Արձանագրությունն ստորագրվում է աշխատանքային խմբի ղեկավարի և աշխատանքային խմբի՝ հանդիպմանը մասնակցած մյուս անդամների կողմից: Աշխատանքային խմբի հանդիպման արձանագրությունները երկօրյա ժամկետում աշխատանքային խմբի ղեկավարի կողմից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

11. Աշխատանքային խմբի ղեկավարը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները, հանրությանը պարբերաբար իրազեկում է գործողությունների ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

### III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

12. Յուրաքանչյուր ընդերքօգտագործող ընկերությունում աշխատանքային խմբի կողմից իրականացվող դիտազննությունը չի կարող գերազանցել 12 աշխատանքային օրը:

13. Աշխատանքային խմբի ղեկավարն ընդերքօգտագործող յուրաքանչյուր ընկերությունում դիտազննության ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ամփոփելով դիտազննության արդյունքները, հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

14. Աշխատանքային խմբի նպատակներով պայմանավորված՝ ընդերքօգտագործող ընկերություններում դիտազննությունների ավարտից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային խումբը կազմում է ամփոփ հաշվետվության նախագիծ:

15. Աշխատանքային խմբի ղեկավարի կողմից կազմված հաշվետվության նախագիծն աշխատանքային խմբի ղեկավարը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է

հանրային քննարկումների, որոնց արդյունքներով հաշվետվության նախագիծը կարող է ենթարկվել լրացումների:

16. Հանրային քննարկումներից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային խմբի ղեկավարի կողմից հաշվետվությունը կարող է վերախմբագրվել:

17. Աշխատանքային խմբի ղեկավարը հաշվետվությունը եռօրյա ժամկետում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ